ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2015 թվական, սեպտեմբերի 18, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Սուրեն Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Համլետ Դանիելյան	Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների ~~հանրապետական~~ միության

31167-15
09 10 15

	նախագահ
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի գործատուների տարածքային միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» ՀԿ գործադիր տնօրեն

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ՝

Սոնա Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի մշտական փոխարինող)
Ժորա Ասատրյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետի խորհրդատու (ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Տ. Բարսեղյանի մշտական փոխարինող)
Սամվել Սողոմոնյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ (ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Տ. Սահակյանի մշտական փոխարինող)
Ալբերտ Բաբայան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ (ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Ավետիսյանի մշտական փոխարինող)
Ձոնիկ Մարգարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Հանս Քրիստիան Քոֆոեդ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ (Հանձնաժողովի անդամ Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների

	տարածքային միության նախագահ Ն. Պապոյանի մշտական փոխարինող)
Մարինե Ժամկոչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Էն ՈՒայ Սթայլ» ՍՊԸ-ի տնօրեն (Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ Շ. Բարսեղյանի մշտական փոխարինող)

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Ֆիլարետ Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ջեմմա Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Նարինե Բալայան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական
Անուշ Դանիելյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Գառնիկ Նալբանդյան	«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Հայկ Մուրադյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ
Արթուր Կեսոյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ
Ռուզաննա Պեպանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ
Նաիրա Բուբուշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի գլխավոր մասնագետ
Մերի Մարկոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի առաջին կարգի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Տիգրան Բարսեղյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տիգրան Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Սերգեյ Ավետիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Նաիրա Պապոյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների տարածքային միության նախագահ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգի քննարկում և հաստատում:

2. Զբաղվածության կարգավորման 2016 թվականի պետական ծրագրի նախագծի ներկայացում և քննարկում:

3. Զբաղվածության կարգավորման ամենամյա (2014 թվականի) պետական ծրագրի և նրանում ընդգրկված զբաղվածության ծրագրերի մոնիթորինգի և գնահատման գործընթացի ամփոփ հաշվետվության ներկայացում:

4. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովելու նպատակով գործողությունների ծրագրի մշակման աշխատանքների քննարկում:

5. Այլ հարցեր:

Հանձնաժողովի նախագահի կողմից հարց բարձրացվեց, թե արդյոք կան նիստի՝ նախապես ուղարկված օրակարգի նախագծի հետ կապված հարցեր կամ առաջարկներ:

Հանձնաժողովի անդամների կողմից նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին և առաջարկվեց հաստատել նիստի օրակարգը նախապես ուղարկված հարցերով:

Առաջարկությանը համապատասխան՝ հաստատվեց նիստի օրակարգը նախապես ուղարկված հարցերով:

1. Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգի քննարկում և հաստատում:

Հանձնաժողովի անդամ Շ. Բարսեղյանի կողմից ըստ բաժինների ներկայացվեց Հանձնաժողովի աշխատակարգի նախագիծը (այսուհետ՝ Աշխատակարգի նախագիծ), որի վերաբերյալ նիստի մասնակիցների կողմից ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները:

1. Ժ. Թորոսյանի կողմից առաջարկվեց հստակեցնել Աշխատակարգի նախագծի 9-րդ բաժնի 1-ին կետը, որը վերաբերում է Հանձնաժողովի քարտուղարի նշանակման հարցին: Մասնավորապես նշվեց, որ ներկայացված ձևակերպումը հստակ չէ, և Հանձնաժողովի նախագահն է իրավասու նշանակել իր հիմնական աշխատավայրի աշխատակազմի անդամներից մեկին Հանձնաժողովի քարտուղար:

Բարձրացված հարցի քննարկման արդյունքում Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց Աշխատակարգի նախագծի 9-րդ բաժնի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանձնաժողովի քարտուղարը, Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ, նշանակվում է Հանձնաժողովի առաջին նիստում՝ Հանձնաժողովի նախագահի հիմնական աշխատավայրի աշխատակազմի անդամներից»:

Նշված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամների կողմից:

2. Հանձնաժողովի անդամ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ս. Քրմոյանի կողմից առաջարկվեց քննարկել հետևյալ հարցերը.

- Աշխատակարգի նախագծի 3-րդ բաժնի 1-ին կետում «մշակում է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «քննարկում է» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հանձնաժողովը չի մշակելու Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) կիրարկումն ապահովելու նպատակով գործողությունների ծրագիրը.
- Աշխատակարգի նախագծի 3-րդ բաժնի 3-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե Հանձնաժողովն ինչ կարգով է սոցիալ-աշխատանքային և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ.
- Աշխատակարգի նախագծում անհրաժեշտ է հստակեցնել Հանձնաժողովի նիստերը դռնբաց են, թե դռնփակ.
- անհրաժեշտ է արդյոք ամրագրել, որ Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները հրապարակվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում.
- Աշխատակարգի նախագծի 4-րդ բաժնի 16-րդ կետից պետք է հանել «խորհրդատվական ձայնի իրավունքով» բառերը.

- աշխատակարգում պետք է ամրագրվի նաև, որ Հանձնաժողովի նիստերի նյութատեխնիկական և կազմակերպչական մասն ապահովում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Ս. Քրմոյանի կողմից ներկայացված հարցերի կապակցությամբ քննարկումների արդյունքում ընդունվեցին հետևյալ որոշումները.

1-ին հարցի կապակցությամբ Հանձնաժողովի նախագահի կողմից նշվեց, որ ճիշտ կլինի աշխատակարգում թողնել «մշակում է» բառերը, քանի որ միևնույնն է Պայմանագրի կիրարկումն ապահովելու նպատակով գործողությունների ծրագիրը մշակում է Հանձնաժողովի կողմից ստեղծվող աշխատանքային խումբը: Նշված դիտարկումն ընդունվեց Հանձնաժողովի անդամների կողմից:

Ներկայացված 2-րդ հարցի կապակցությամբ Հանձնաժողովի անդամների կողմից առաջարկվեց տալ հետևյալ ձևակերպումը, որ Հանձնաժողովը սոցիալ-աշխատանքային և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ է ներկայացնում Հանձնաժողովի նախագահի միջոցով:

3-րդ հարցի քննարկման արդյունքում Հանձնաժողովի անդամների կողմից որոշվեց աշխատակարգի 4-րդ բաժնում ամրագրել դրույթ, որով կսահմանվի, որ Հանձնաժողովի նիստերը դռնբաց են, եթե դրանց վերաբերյալ Հանձնաժողովն այլ որոշում չի կայացրել:

4-րդ հարցի առնչությամբ Շ. Բարսեղյանի կողմից նշվեց, որ Պայմանագրում ամրագրված Հանձնաժողովի նախագահի լիազորություններում նշված է նաև, որ Հանձնաժողովի նախագահն ապահովում է Հանձնաժողովի գործողությունների և որոշումների հրապարակայնությունը: Ուստի Հանձնաժողովի արձանագրությունների հրապարակման մասին առանձին ամրագրման անհրաժեշտությունը բացակայում է: Ներկայացված դիտարկումն ընդունվեց Հանձնաժողովի անդամների կողմից:

Ներկայացված 5-րդ և 6-րդ առաջարկություններն ընդունվեցին Հանձնաժողովի անդամների կողմից:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանի կողմից առաջարկվեց աշխատակարգում ամրագրել նաև

Հանձնաժողովի անդամի թույլատրելի բացակայությունների թիվ, որից ավել բացակայության դեպքում Հանձնաժողովի անդամը պետք է փոխարինվի նոր անդամով:

Ա. Պետրոսյանի կողմից ներկայացված հարցի կապակցությամբ քննարկումների արդյունքում Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց նշված կարգավորման վերաբերյալ կողմերը նիստից հետո ներկայացնեն իրենց առաջարկությունները, որից հետո հաստատել քննարկումներից հետո համաձայնեցված առաջարկությունը:

Հանձնաժողովի նախագահի առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամների կողմից:

4. Գ. Մակարյանի կողմից նշվեց, որ չնայած այն հանգամանքին, որ Հանձնաժողովի աշխատակարգում կա ամրագրված դրույթ, որ նիստի օրակարգի նախագիծը ձևավորում է Հանձնաժողովի նախագահը՝ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա, այնուամենայնիվ, ըստ իրեն այս կետը չի կատարվում: Նշվեց, որ մինչև նիստը իրենց կողմից ներկայացվել են առաջարկություններ, որոնք նիստի օրակագում արտացոլված չեն: Միաժամանակ առաջարկվեց, որ այսուհետ նիստի օրակարգին առնչվող նյութերի հետ նիստի մասնակիցներին ուղարկվեն նաև նիստի օրակարգի վերաբերյալ կողմերի ներկայացրած առաջարկությունները:

Նշված հարցի կապակցությամբ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ նիստի օրակարգը, աշխատակարգի համաձայն, ձևավորել է Հանձնաժողովի նախագահը և, որ նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ մինչև օրակարգի հաստատումը կողմերը կարող էին ներկայացնել իրենց առաջարկությունները:

Միաժամանակ Հանձնաժողովի նախագահի կողմից վերոնշյալ առաջարկության կապակցությամբ առաջարկվեց Հանձնաժողովի աշխատակարգում ամրագրել, որ Հանձնաժողովի նիստի օրակարգի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները նիստի օրակարգի նյութերի հետ ուղարկվում են նիստի մասնակիցներին: *Նշված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի անդամների կողմից:*

5. Գ. Մակարյանի կողմից առաջարկվեց նաև սահմանել Հանձնաժողովի նիստերում քննարկվող հարցերի քվոտավորում՝ ըստ ոլորտների:

Ներկայացված այս հարցի կապակցությամբ Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց քննարկել և սահմանել Հանձնաժողովի նիստերում քննարկվող հարցերի քվոտավորման հստակ մեխանիզմներ:

Քվեարկության դրվեց Հանձնաժողովի աշխատակարգի լրամշակված տարբերակը հաստատելու հարցը:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

Ներկայացված և համաձայնեցված առաջարկություններին համապատասխան հաստատել Հանձնաժողովի աշխատակարգը:

Միաժամանակ օրակարգի 1-ին հարցի շրջանակներում Հանձնաժողովի աշխատակարգին համաձայն՝ Հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմ քվեարկության արդյունքում Հանձնաժողովի քարտուղար ընտրվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Սարգսյանը:

2. Զբաղվածության կարգավորման 2016 թվականի պետական ծրագրի նախագծի ներկայացում և քննարկում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ Ռ. Պեպանյանի կողմից նշվեց, որ.

Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի մշակման և իրականացման օրենսդրական հիմքը Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությունն է և «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Ամենամյա ծրագրի նպատակը բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումն է: Այն ուղղված է աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ ըստ առաջնահերթությունների կայուն զբաղվածության և ինքնազբաղվածության խթանմանը, աշխատանք փնտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության մակարդակի բարձրացմանը, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով համալրելուն, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում

աշխատաշուկայում անմրցունակ խմբերի արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովմանը:

Զբաղվածության կարգավորման 2016թ. պետական ծրագրի նախագծում ներկայացված են զբաղվածության իրավիճակային վերլուծության ամփոփ արդյունքները, զբաղվածության պետական կարգավորման ոլորտի համար առանձնացված են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծմանն են միտված զբաղվածության կարգավորման թվով 11 պետական ակտիվ ծրագրերն ու ծառայությունները: Միաժամանակ համառոտ ներկայացվեցին ծրագրերն ու ծառայությունները:

Նշվեց նաև, որ ամենամյա պետական ծրագրի իրականացման համար նախատեսված է ՀՀ 2016թ. պետական բյուջեից հատկացնել 2375161.0հզ. դրամ:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ Գ. Մակարյանի կողմից նշվեց, որ իրենց միության կողմից Զբաղվածության կարգավորման 2016 թվականի պետական ծրագրի նախագծի վերաբերյալ դիտողություններ չեն ներկայացվել ժամանակի սղության պատճառով: Այդ իսկ պատճառով իրենց առաջարկությունները ներկայացվում են Հանձնաժողովի նիստում: Առաջարկվեց քննարկել նախագծով նախատեսվող ծրագրերի մոդելը փոխելու հարցը, հիմքում ունենալով այն հանգամանքը, որ Պայմանագրում ներառվել է նաև սոցիալ-տնտեսական հարցերին վերաբերող բաժին: Այս առումով կարևորվեց ընտանեկան բիզնեսին վերաբերող հարցերի ներառումը զբաղվածության կարգավորման պետական ծրագրում՝ նպատակ ունենալով խթանել ընտանեկան բիզնեսը:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ս. Հարությունյանի կողմից նշվեց, որ ընտանեկան բիզնեսին վերաբերող հարցերը զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում ներառելու համար անհրաժեշտ է առաջին հերթին փոփոխություններ կատարել համապատասխան իրավական ակտերում՝ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում և համապատասխան կարգերում:

Հանձնաժողովի նախագահի կողմից նշվեց, որ նշված առաջարկությունը ենթակա է քննարկման: Անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել համապատասխան կարգավորումներ սահմանող իրավական ակտերը, վեր հանել այդ առումով առկա խնդիրները:

Ելնելով վերոգրյալից՝ նիստի օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

2.1. Քննարկելով Զբաղվածության կարգավորման 2016 թվականի պետական ծրագրի նախագիծը և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշումը՝ տալ դրական եզրակացություն:

2.2. Առաջարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությանը և «Աշխատանքի և

սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին ուսումնասիրել վերոնշյալ հարցի հետ կապված համապատասխան իրավական կարգավորումները, վեր հանել խնդիրները և ներկայացնել առաջարկություններ:

<u>3.</u> Զբաղվածության կարգավորման ամենամյա (2014 թվականի) պետական ծրագրի և նրանում ընդգրկված զբաղվածության ծրագրերի մոնիթորինգի և գնահատման գործընթացի ամփոփ հաշվետվության ներկայացում:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ Հանձնաժողովի անդամների կողմից առաջարկվեց չներկայացնել այն, քանի որ նյութն իրենց ուշ է ուղարկվել և ժամանակ չեն ունեցել ամբողջությամբ ուսումնասիրելու այն: Նշված առաջարկն ընդունվեց Հանձնաժողովի նախագահի կողմից:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց այն հանել քննարկումից:

<u>4.</u> Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման աշխատանքների քննարկում:

Այս հարցի շրջանակներում Հանձնաժողովի Նախագահի կողմից նշվեց, որ Պայմանագրի 8-րդ բաժնի 8.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, Կողմերը հաստատում են Հանձնաժողովի կողմից մշակված և Պայմանագրի կիրարկումն ապահովելու նպատակով կողմերին ներկայացված գործողությունների ծրագիրը կամ անհամաձայնության դեպքում, լրամշակման նպատակով համապատասխան առարկություններով, առաջարկություններով այն վերադարձնում են Հանձնաժողովի քննարկմանը: Ստացվում է, որ Պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագիրը պետք է մշակվի և հաստատվի մինչև 2015 թվականի սեպտեմբերի վերջ:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

4.1. Կողմերի 3-ական ներկայացուցիչներից ձևավորել աշխատանքային խումբ՝ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման համար.

4.2. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման համար ձևավորվող աշխատանքային խմբի կազմում ընդգրկվող անձանց թեկնածությունները նիստից հետո ներկայացվեն Հանձնաժողովի քարտուղարին.

5. Այլ հարցեր:

Օրակարգի 5-րդ՝ այլ հարցերի շրջանակներում Գ. Մակարյանի կողմից ներկայացվեցին հետևյալ հարցերը.

- առաջարկվեց 2016 թվականի բյուջեի հայտի նախագծում ներառվի նաև Հանձնաժողովի քարտուղարի առանձին հաստիք ունենալու համար համապատասխան ֆինանսական հատկացումների մաս.
- Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի հանրային իրազեկման հարցը, և որպես լուծում առաջարկվեց տարբեր տեղեկատվական ակումբներում եռակողմ ասուլիսների անցկացումը.

Գ. Մակարյանի կողմից առաջարկված 1-ին հարցի կապակցությամբ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նման առաջարկություն ներկայացվել է, որը մերժվել է:

Պայմանագրի հանրային իրազեկման մասին Գ. Մակարյանի կողմից ներկայացված ձևաչափն ընդունելի համարվեց Հանձնաժողովի նախագահի կողմից: Ա. Ասատրյանը միաժամանակ առաջարկեց «Սոցիալական անդրադարձ» հաղորդաշարի առաջիկա հաղորդումներից մեկը նվիրվի սոցիալական գործընկերությանը:

Գ. Մակարյանը նշեց նաև, որ Հայաստանի գործատուների հանրապետական միությունը 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կազմակերպում է սոցիալական գործընկերության 6-րդ ազգային կոնֆերանսը և առաջարկեց, որ ապահովվի սոցիալական գործընկերների ակտիվ մասնակցությունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**